



ԲԱՅԱՌԻՎ Լրագրողներն Ադրբեջանում

ՈՉ ՄԻ ՓԱԽՈՒՄՏ

Կարգավիճակ՝ 19.07.2021, ժամը 5:00

Ադրբեջանն ակնհայտ իսրայելական NSO ընկերության հաճախորդ է: Դրա լրտեսական ծրագրակազմով բազմաթիվ լրագրողներ և իրավապաշտպաններ նշանառության տակ վերցվեցին կոպկասյան հանրապետությունում:

Քրիստիան Բաարս, Ֆլորիան Ֆլեյդ, Յոհաննես Յոլմես և Գեորգ Մասկոլո, NDR / WDR

Խաղիչա Իսմայիլովան միշտ շատ զգույշ էր: Նրան պարզ էր, որ իրեն հետապնդում են: «Ամբողջ ընթացքում դու գիտես, որ կարող ես վերահսկվել» - ասում է 45-ամյա լրագրողը: Նա ծագումով Ադրբեջանից է՝ Կոպկասի մի երկրից: Նրա կառավարությունը հայտնի է մարդու իրավունքների խախտումներով, ընդդիմությանը ճնշելով, լրագրողներին ու ակտիվիստներին հետապնդելով:

Իսմայիլովան իր երկրի ամենահայտնի հետաքննող լրագրողներից է: Մշտապես նա զեկուցել է նախագահ Իլհամ Ալիևի ընտանիքի տնտեսական շահերի մասին: Դեռ վաղուց նա սպառնալիքների էր ենթարկվում, նրա ննջասենյակից գաղտնի տեսաձայնագրություններ էին հրապարակվում: Այդ բոլորից հետո նա նույնիսկ մեկուկես տարի բանտ նստեց՝ իբրև թե հարկերից խուսափելու պատճառով: Դրանից հետո տարիներ շարունակ նա չէր կարողանում լքել Ադրբեջանը: “Human Rights Watch” կազմակերպությունը լրագրողի դեմ դատավարությունն անվանեց «քաղաքականապես հիմնավորված»:



Բացառիկ 18.07.2021

Տրոյական «Պեգաս»

Ինչպես են ավտորիտար պետությունները լրտեսում իրենց հակառակորդներին

Լրագրողները, ակտիվիստները և քաղաքական գործիչներն ակնհայտորեն հզոր լրտեսական ծրագրակազմի թիրախ էին ամբողջ աշխարհում:

Ադրբեջանուհին միշտ փորձել է, որքան հնարավոր է լավ, պաշտպանել իր աղբյուրները, նմանապես՝ իր ընտանիքը: Օրինակ՝ հաղորդակցվելու համար նա օգտագործում էր գաղտնագրված չաթ ծրագրեր: Այդ ամենը բացարձակ չի օգնել: Տարիներ շարունակ Իսմայիլովան ուժեղ վերահսկվում էր, ամեն քայլափոխի: Ըստ երևույթին, 2019 թ. գարնանը լրագրողի բջջային հեռախոսում գաղտնի տեղադրվել էր վերահսկողության հզոր ծրագրակազմ՝ իսրայելական NSO ընկերության «Պեգաս» ծրագիրը:

Բեռլինի “Amnesty International Security Lab”-ի ՏՏ փորձագետները ուսումնասիրել են Իսմայիլովայի բջջային հեռախոսը և դրա վրա գտել լրտեսական ծրագրի թվային հետքերը: Քրեագիտական հետաքննության համաձայն՝ վերջին գործողություններից անցել են հավանաբար միայն մի քանի ամիսներ, որոնցից անմիջապես առաջ նա լքեց Ադրբեջանը:



09.02.2020

Ընտրություններ Ադրբեջանում

Ժամանակակից և ավտորիտար

Ադրբեջանում այսօր ընտրություններ են: Նավթի բումից հետո ղեկավարությունը նոր ուղիներ է փնտրում, որպեսզի ամեն ինչ մնա այնպես, ինչպես որ կա:

Ընդդիմադիրն ու ակտիվիստը լրտեսվել են

NSO-ի տրոյականի միջոցով ամբողջ բջջային հեռախոսը կարող է աննկատ լրտեսվել. էլեկտրոնային նամակներ, SMS, կոնտակտներ, օրացույց, լուսանկարներ ու տեսանյութեր և շատ ավելին: Ծագրակազմով հեռախոսը վերածվում է փայտոջիլի և հսկիչ տեսախցիկի: Այն ամենը, ինչ խոսվում է և մուտքագրվում, հսկողություն իրականացնողները կարող են միաժամանակ լսել, կարդալ կամ նույնիսկ տեսնել, նույնիսկ եթե դա տեղի է ունենում իրականում գաղտնագրված չաթ ծրագրերի միջոցով, ինչպես դրանք օգտագործել է նաև Իսմայիլովան:

Ըստ երևույթին, Ադրբեջանի իսրայելական կիբեր գործիքներ արտադրող NSO-ի հաճախորդ է: Դա հասկացնել են տալիս այն տվյալները, որոնք լրագրողները կարողացան աչքի անցկացնել «Պեգաս ծրագրի» շրջանակներում: Բազմաթիվ հեռախոսահամարներ, որոնք ենթադրաբար «Պեգաս» ծրագրակազմով վերցվում էին նշանառության տակ, կարող էին տրվել կովկասյան հանրապետության լրագրողներին, ընդդիմության ակտիվիստներին և իրավապաշտպաններին:

Այնտեղ հիշատակվում է, օրինակ, Իլքին Ռուստամզադեի համարը. մի ընդդիմադիր, որը խաղաղ ցույցեր էր կազմակերպել և 2014 թ. դատապարտվել էր ութ տարվա ազատազրկման՝ հասարակական կարգը վտանգելու համար: 2019 թ. Ռուստամզադեին «ներվեց» նախագահ Ալիևի կողմից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նրա կալանքը նախապես գնահատել էր որպես անօրինական: Բանտից ազատ արձակվելուց հետո, սակայն, հաշվեհարդարները շարունակվեցին, Ռուստամզադեի բջջային հեռախոսը հարձակման ենթարկվեց, հավանաբար «Պեգաս» տրոյականով: 2019 թ. նշանառության տակ վերցվեց, ըստ երևույթին, նաև ակտիվիստ Ֆաթիմա Մովլամլին, որը մասնակցում էր «Խոսենք բռնապետի մասին» ("Let's talk about the dictator") արշավին: Այն ժամանակ նա ընդամենը 18 տարեկան էր: Սոցիալական ցանցերում նրա անվան տակ ստեղծվեցին կեղծ պրոֆիլներ, հրապարակվեցին անձնական լուսանկարներ, նաև՝ ինտիմ նկարներ:



13.03.2021

Մեղադրանքներ Միության քաղաքական գործիչների դեմ

[Շփումներ բռնակալների հետ](#)


Միությունում երկար ժամանակ մտերմական շփումներ կան Ադրբեջանի և Ղազախստանի հետ:

«Պատշաճ միջոցառումներ» չարաշահման դեմ

«Պեգաս ծրագրի» շրջանակներում միջազգային հետազոտական թիմի հարցապնն ի պատասխան NSO-ն տեղեկացրեց, որ նախագծված ամբողջ հաշվետվության մեջ թվարկված կետերից շատերի դեպքում խոսքը «կեղծ պնդումների» մասին է: Դրանց համար «փաստական հիմք չկա»: Որպես իբրև թե կեղծ մեղադրանքի օրինակ՝ NSO-ի կողմից լիազորված իրավաբանական մի ընկերություն անվանում էր այն ենթադրությունը, որ ընկերությունը կարող է օգնել գողանալու մի ակտիվիստի ինտիմ լուսանկարներ և հրապարակել: Ձեռնարկությունը նաև չի արտահայտվում կոնկրետ հաճախորդների մասին:

NSO-ն հայտնեց, որ չնայած իր տեսակետից կեղծ տեղեկություններին՝ ինքը կշարունակի հիմնովին հետազոտել իր ծրագրերի չարաշահման վերաբերյալ «բոլոր հավաստի մեղադրանքները» և կասկածի դեպքում «համապատասխան միջոցառումներ կձեռնարկի»,

օրինակ՝ կանջատի հաճախորդների համակարգերը, ինչպես արդեն դա բազմիցս տեղի է ունեցել անցյալում: Ընկերությունն ինքն իրեն տեսնում է «փրկարար առաքելության» մեջ, քանի որ իր տեխնոլոգիան օգնում է կանխել, օրինակ, ահաբեկչությունները կամ կոտրել թմրանյութերի վաճառքի օղակները:



11.02.2020

Ընտրություններ Ադրբեջանում

Ժողովրդավարական ֆարսի գովեստ

Որ Ադրբեջանի խորհրդարանական ընտրությունները կեղծվել են, հաստատել են շատ դիտորդներ:

Թե արդյո՞ք Ադրբեջանն ընկերության հաճախորդ է, այդ մասին ո՛չ NSO-ն, ո՛չ Ադրբեջանի կառավարությունը չցանկացան արտահայտվել: Նախագահ Ալիևը տարիներ շարունակ ջանում է հղկել իր երկրի՝ սաստիկ վնասված իմիջը, օրինակ՝ միջազգային խոշոր իրադարձությունների միջոցով, ինչպիսիք են՝ «Եվրատեսիլ 2012» երգի մրցույթը, «Ֆորմուլա 1» մրցավազքը կամ, ինչպես վերջերս, որպես ֆուտբոլի եվրոպական խաղերի հյուրընկալող: Աշխարհը Բաքվի հյուր, այսպես է հավանաբար հաշվարկը: Վարչակարգն օգնություն է ստանում ոչ միայն սպորտային ասոցիացիաներից, այլ նաև Եվրոպայի խորհրդի պատգամավորներից, որոնցից մի քանիսը կասկածվում են Ադրբեջանի ներկայացուցիչների կողմից կաշառված լինելու մեջ: Վերջին տարիներին գերմանացի մի քանի քաղաքական գործիչներ նույնպես ուշադրություն են գրավել Ալիևի վարչակարգի հանդեպ իրենց անքննադատ դիրքորոշման և մոտիկության պատճառով:

Ասում են, որ Ադրբեջանում այժմ շարունակում են տեղի ունենալ մարդու իրավունքների համակարգային խախտումներ: Ասում են, որ բազմաթիվ քաղբանտարկյալներ դեռ բանտերում են: Իշխող ընտանիքն ակնհայտորեն ստեղծել է իշխանության պահպանման մի համակարգ, որը լրագրողներին և նրանց հետազոտությունները ընկալում է որպես սպառնալիք և այդ պատճառով նրանց վերահսկում է և հարցուփորձի ենթարկում:



12.06.2021

ՈԻԵՖԱ-ի հովանավորությունը

Ադրբեջանը հենվում է նոր ռազմավարության վրա

Ադրբեջանական «Սոկար» նավթային կոնցեռնը ֆուտբոլի Եվրոպայի առաջնության հովանավորն էր: Այն վերջերս դուրս նետվեց:

Կոնտակտներ և աղբյուրներ վտանգի մեջ

Իսրայելական NSO ընկերության գրառումները թույլ են տալիս ենթադրել, որ երկրի շատ հայտնի լրագրողներ հարձակման էին ենթարկվում լրտեսական գործիքներով: Դա, ըստ երևույթին, վերաբերվում էր նաև Խաղիջա Իսմայիլովայի գործընկեր և ընկեր Սևինչ Վաքիֆքիզին: Նա Ադրբեջանում զեկուցում է այն խնդիրների մասին, որոնք կարող են դուրեկան չլինել վարչակարգին. բողոքների, քաղբանտարկյալների և հնարավոր ընտրակեղծիքների մասին: Վաքիֆքիզին այժմ ապրում է Բեռլինում՝ «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության կրթաթոշակի աջակցությամբ:

Ըստ երևույթին, նա նույնպես վերահսկվում էր NSO լրտեսական ծրագրակազմով: Դա ցույց են տալիս նրա բջջային հեռախոսի ուսումնասիրությունները: Ըստ այդմ՝ 2019 թ. ի վեր «Պեգաս»-ը բազմիցս ակտիվ էր նրա բջջային հեռախոսում, նաև՝ 2020 թ. Սուրբ Ծննդյան երեկոյան և մինչև այս տարվա գարուն: Վաքիֆքիզին ասում է՝ իր համար պարզ էր, որ Ադրբեջանի պետական կառույցները վերահսկում են լրագրողներին: Բայց ինքը երբեք չէր կարող պատկերացնել, որ «նրանք այդ տեխնոլոգիաները կօգտագործեն մեզ՝ լրագրողներս, հետևելու համար»:

Վաքիֆքիզին վախենում է, որ, այո, այսպես նրանք, ամենայն հավանականությամբ, ստացել են բոլոր անձնական տեղեկությունները, ինչպես՝ լուսանկարներ կամ տեսանյութեր կամ կոնտակտների ցուցակներ ու նաև տեղեկություններ իրենց բոլոր աղբյուրների մասին: «Երբ իմացա վերահսկողության մասին, անմիջապես մտածեցի դրանց մասին, քանի որ դրանք կարող են շատ արագ խնդիրներ ունենալ պետության հետ»:



04.06.2012

Լարվածություն Իսրայելի ու Իրանի միջև

Ադրբեջանը Իրանի վրա հարձակման կամո՞ւրջ:

Գերակշիռ չափով իսլամական բնութագիր ունեցող Ադրբեջանը բարդ հարաբերություններ ունի հարևան Իրանի հետ:

Ռազմական փորձագետը նշանակետում

Մեկ այլ հնարավոր գոհ է լրագրող Յասուր Մամեդովը՝ Ադրբեջանի զինվորականության ամենահեղինակավոր գիտականներից մեկը: 2014 թ., երբ Ադրբեջանում բռնաճնշումների ալիք եղավ լրագրողների նկատմամբ, Մամեդովը ևս հարցաքննվեց անվտանգության ուժերի կողմից: Նրան ասացին, որ իրեն բանտ կզգեն, եթե չդադարի բանակի մասին զեկուցել: Դեպքի վերաբերյալ հարցմանն ի պատասխան Ադրբեջանի կառավարությունը չցանկացավ արտահայտվել:



06.10.2020

Լեռնային Ղարաբաղ

Նոր զենքերը փոփոխում են պատերազմը

Բարձրադիր և խրամատներով շրջապատված Լեռնային Ղարաբաղը երկար ժամանակ համարվում էր դժվար նվաճելի Ադրբեջանի համար:

Մամեդովը փախավ երկրից: Իր կնոջ և երկու որդիների հետ մեքենայով նախ գնաց Վրաստան: Այժմ նա ապրում է Բիելֆելդում, սովորում և աշխատում է որպես ազատ լրագրող գերմանական տեղական լրատվամիջոցներում: Ադրբեջանի զինված ուժերի մասին նա հազվադեպ է գրում՝ իր բլոգում կամ Facebook-ում: Այնուամենայնիվ, մի քանի տարի առաջ լրագրողը կրկին հայտնվել էր Ադրբեջանի պետական իշխանության նշանակետում: 2019 թ. NSO-ի մի հաճախորդի կողմից նրա ադրբեջանական բջջային համարը բացահայտ նույնականացվեց որպես «Պեգաս» վերահսկողության ծրագրակազմի հավանական թիրախ: Բայց նա բջջային հեռախոսը թողել էր Ադրբեջանում: Նա հանել էր մարտկոցը և սարքը փաթաթել պլաստիկ փայլաթիթեղով:

Այս տեքստի հետազոտությանը մասնակցել են Քրիստիանա Լյուդվիգը, Հաննես Մունցինգերը, Միրանդա Պատրուշիչը, Էնդրյու Սալիվանը, Պոլ Ռադուն և Արթուր Բուվարը:

Հրապարակվել է <https://www.tagesschau.de/investigativ/ndr-wdr/spaeh-software-pegasus-aserbajdschan-101.html> կայքում: